ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՑԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ՍՍՌՄ-Ի ՀԵՏ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿԱՊԻ ԴԱՆԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Պ-ՐՆ ՕԼՍԵՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Նոյեմբերի 20-ին Երևան ժամանեց ՍՍՌՄ-ի հետ կուլտուրական կապի դանիական ընկերության նախագահ, Կոպենհագենի համալսարանի պրոֆեսոր պ-րն Ա. Օլսենը իր կնոջ՝ տիկին Օլսենի հետ։

Երևանում մնալու ընթացքում նրանք դիտեցին քաղաքը, զրույց ունեցան Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Մ. Գրիգորյանի հետ, այցելեցին Մատենադարանը, «Հայ տպագիր գրքի ցուցահանդեսը», Պետական պատմական թանգարանը և կերպարվեստի թանգարանը։

Պ-րն և տիկին Օլսենները Երևանում այցելեցին մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ և եղան Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղի կոլխոզում. ներկայացումներ դիտեցին Սունդուկյանի անվան դրամատիկ թատրոնում և Սպենդիարովի անվան օպերայի ու բալետի պետական թատրոնում, ինչպես նաև դիտեցին Երևանի կինոստուդիայի նկարահանած ֆիլմերը։

Պ-րն և տիկին Օլսենները զրույց ունեցան արտասահմանյան հայերի ընդունման և տեղավորման կոմիտեի նախագահ Բ. Աստվածատրյանի և Բուլղարիայից, Իրանից, Ռումինիայից ու Սիրիայից ներգաղթած հայերի հետ։

Նոյեմբերի 25-ին պ-րն Օլսենը իր կնոջ հետ միասին մեկնեց Մոսկվա։

Մեկնելուց առաջ պ-րն Օլսենը մամուլի համար արավ հետևյալ հայտարարությունը.

«Հայաստանում անցկացրած կարճ ժամանակի ընթացքում ինձ հաջողվեց, իմ կարծիքով, պարզ պատկերացում ստանալ հայ ժողովրդի կյանքի մասին։ Իմ ուղևորությունը դեպի Հայաստան ես առաջին հերթին կատարել եմ ներգաղթի հարցերը ուսումնասիրելու նպատակով։

Ես բոլոր հնարավոր տեղեկություններն ստացա ներգաղթի կոմիտեի նախագահից, զրույցներ ունեցա Բուլղարիայից, Ռումինիայից, Սիրիայից և Իրանից ներգաղթածների հետ, սեփական աչքերով տեսա, թե ինչպե՞ս և որտեղ են ապրում նրանք։ Ես իմացա նաև այն մասին, թե նրանք ինչպիսի վստահությամբ են նայում ապագային և ես հիացած եմ, թե Սովետական Հայկական Ռեսպուբլիկան, Սովետական մեծ Միության հետ միասին, ինչպիսի միջոցներով է կարողացել լուծել մարդասիրական մեծ նշանակություն ունեցող հարցը և դրանով իսկ արտասահմանյան հայերին, որոնք հալածվել են թյուրքական և ֆաշիստական բարբարոսների կողմից, հնարավորություն տալ իրենց իսկական հայրենիքը գտնելու Սովետական Հայաստանում։

Այդ կապակցությամբ ես պետք է հիշատակեմ, որ ինձ շատ լավ հասկանալի է, թե ինչու հայ ժողովուրդը շահագրգռված է հարցի այդպիսի լուծմամբ, որը նրան կտա ինչ որ ավելի, քան հողի այն մասը, որը կոչվում է Սովետական Հայաստան։

Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության սիրալիր օգնության շնորհիվ, որի հյուրը եղա ես, և հատկապես տիկին Պետրոսյանի կողմից ցույց տրված լայն աջակցության շնորհիվ, ես հնարավորություն ստացա ծանոթանալու հայ ժողովրդի կյանքի շատ կողմերի հետ։ Ես ուսումնասիրեցի նրա հին կուլտուրան և տեսա, թե նրանք ինչպիսի գուրգուրանքով են պահպանում իրենց երկրի կուլտուրական գանձերը։

Ես այցելեցի Հայաստանի թանգարանները և գրադարանները, նրա հիանալի օպերային

թատրոնը, և արտասովոր բավականություն ստացա «Համլետ»-ի հիանալի բեմադրությամբ դրամատիկ թատրոնում։

Ես եղա նաև կինոստուդիայում և կարող եմ հայտարարել, որ հայկական կինոնկարները բարձրորակ են։ Բացի դրանից, ես առանձնահատուկ հետաքրքրությամբ տեսա, թե ինչպես հին փոքրիկ ավանից առաջ է եկել նոր քաղաք Երևանը, որը զարդարված է բազմաթիվ մոնումենտալ շենքերով և տուֆից պատրաստած հիանալի բնակելի տներով։ Ես տեսա ֆաբրիկաներ, հիդրոէլեկտրակայաններ և, ինչը միանգամից նկատելի է արտաահմանցու համար, առաջավոր տեխնիկայի առկայությունը. էլեկտրակայանների սարքավորման 99 տոկոսը հայրենական ծագում ունի։ Ես եղա կոլխոզներում, որտեղ ծանոթացա դրանց կազմակերպման սկզբունքների և կոլխոզնիկների կյանքի հետ։ Ես զմայլված եմ աշխատանքի այն արագ տեմպով և հայ ժողովրդի աշխատանքային խանդավառությամբ, որ ես նկատեցի ամենուրեք։

Ես անցյալում էլ լավ ծանոթ էի Հայկական ռեսպուբլիկայի կյանքի հետ՝ ռևոլուցիայից հետո, բայց այժմ նրա հրապարակված հրատարակություններով, ինչպես նաև համալսարանի կոլեգաների հետ ունեցած զրույցներից ես ստացա մի շարք նոր տեղեկություններ։ Այնուհետև, ես եռանդուն աշխատանք նկատեցի ոչ միայն ժողովրդական կրթության ասպարեզում, այլև համալսարանում և բարձրագույն դպրոցներում, որոնց նպատակն է արագորեն մեծ թվով մասնագետներ պատրաստել երկրի աճող շինարարությանը սպասարկելու համար։

Ես տեսնում եմ 26 տարվա ընթացքում ձեռք բերված մեծ հաջողությունները և լիովին համոզված եմ, որ ձեր ձգտումները կիրականան և որ դուք արագ ու պլանաչափորեն կվերացնեք այն դժվարությունները, որոնք նույնպես լավ հայտնի են ինձ։ Սովետական Հայաստանը փայլուն օրինակ է այն բանի, թե ինչպես ազգային կյանքը սովետական ռեսպուբլիկայում, Սովետական Միության սիստեմում, կարող է հասնել ամենալավագույն արդյունքների։ Եվ հայ ժողովուրդը ամենից առաջ հայրենասեր է։ Երբ ես մի ներգաղթողի հարցրի, թե նա երջանի՞կ է արդյոք Սովետական Հայաստանում գտնվելու համար, ապա նա ինձ պատասխանեց. «Իհարկե, պրոֆեսոր։ Ես լավ տեղավորված եմ, բայց եթե նույնիսկ երկրի դրությունը վատ լիներ, ապա ես նորից իմ կյանքը կանցկացնեի այստեղ։ Չէ՞ որ Հայաստանը իմ հայրենիքն է»։

ԱԼԲԵՐՏ ՕԼՍԵՆ

Կոպենհագենի համալսարանի պրոֆեսոր

25 նոյեմբեր 1946 թ.

Երևան

ՊՐՈՖԵՍՈՐ ՖՐԵԴԵՐԻԿ ՄԱԿԼԵՐ

Ֆրեդերիկ Մակլերը մեռավ այս պատերազմին սկիզբը, իր ծննդավայրին՝ Մոն Բելիարի մեջ։ Այդ մեծ հայասերին մահը անշշուկ անցավ գերմանական դրամման շրջանին մեջ, երբ հայ ամենով դոյություն չուներ։

Պրոֆեսոր Մակլերը կպատկաներ մեծ բողոքական ընտանիքի մը, որու անդամներեն շատեր ավետարանական հովիվներ էին. այժմ կհանգի իր հորը՝ Պատվելի Մակլերի դամբարանին մեջ։ Ինքն ալ պատրաստված էր հովուական պաշտոնին, բայց չզգալով իր մեջ այդ սրբազան պաշտոնին կոչումը, ուսավ արևելյան հին ու դասական լեզուները։ Իր կարգին եղավ ուսուցիչ հայերենի Langues Orientales-ի դպրոցին մեջ։

Միասին աշխատած ենք երկար տարեն և այդ աշխատակցությունեն կմնա իմ մոտ սրբագրված ձեռագիր վիճակի մեջ Շիրվանզադեի Պատվի համար-ին թարգմանությունը, որ չէ հրատարակված։ Բազմաթիվ են Մակլերի աշխատությունները հայոց լեզվին, գրականության, պատմության, արվեստին, քաղաքական կացության վրա։

Ինքն է, որ կազմած է Եվրոպական թանգարաններու հայերեն ձեռագիրներու ցուցակները։

Փափաքելի է, որ իր այդ բոլոր գործերը ամփոփվին և հրատարակվին։ Դժբախտաբար Իր հոս մատենադարանը ցրվեցավ կարգ մը անհոգությանց պատճառավ, երբ կարելի էր Երևանի Գրքի Տան մեջ ամփոփել։

Դոկտ. ՀՈՎՀ. ԱՐԹԻՆՅԱՆ

Առնուիլ—լե—Գոնես. Ֆրանսա

(«Հայաստանի կոչնակ» թիվ 40, 1946 թ.)